**Հարց** Ինչքանո՞վ է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ԼՂՀ օրենքի գործողությունը տարածվում ԼՂՀ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող սուբյեկտների և հեռուստառադիոընկերությունների վրա:

**Պատասխան** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ԼՂՀ օրենքի գործողությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող սուբյեկտների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստառադիոընկերությունների վրա տարածվում է այն չափով, որքանով դրանց պատրաստած հաղորդումները տարածվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, բացառությամբ միջպետական պայմանագրերի հիման վրա հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների: